Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին որոշման նախագծի

Որոշման ընդունումը բխում է << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջից, համաձայն որի համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքային սեփականություն հանդիսացող գույքը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող 1 միավոր 0,4098 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը 27662 (քսանյոթ հազար վեց հարյուր վաթսուներկու) դրամ կադաստրային արժեքով:

Աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետ՝ **Բ.Թադևոսյան**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Համայնքային սեփականություն հանդիսացող 1 միավոր հողամասի ուղղակի վաճառքով օտարման մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Ուղղակի վաճառքով օտարվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1 միավոր 0,4098 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի ուղղակի վաճառքով օտարելու մասին որոշման ընդունումը Նաիրի համայնքի բյուջեում ենթադրում է 27662 (քսանյոթ հազար վեց հարյուր վաթսուներկու) դրամ եկամուտների ավելացում:

Աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետ՝ **Բ.Թադևոսյան**